

ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

ՀՈՐԻ, ԶՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻ-ԶՈՆ» ԾԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Դեկտեմբեր 2022

ՄԵՐ ԽՕՍԲԸ

Կաղանդը ընտանիքիս հետ...

Կաղանդը մեծերուն եւ փոքրերուն ամենէն սիրելի տօներէն մէկն է: Կաղանդը իր մէջ կը խտացնէ շատ կարեւոր կէտեր: Առաջին հերթին, կաղանդը իր հետ բոլորիս նուէրներ կը բերէ:

Տարօրինակօրէն Կաղանդ պապան բոլորիս համար կ'ընտրէ ճիշդ մեր նախասիրած նուէրը, այս ալ կը մնայ կաղանդի կախարդանքը:

Կաղանդի տօնին մեր տունները կը լեցուին գուրգուրանքով, ճոխութեամբ, բարեկամներով, հարազատներով եւ համեղ ճաշերով:

Նաեւ այս ամանդական տօնը իրեն հետ կը բերէ օրհնութիւն եւ բարի մաղթանքներ:

Սիրելի ընկերներ, աշխարհի վրայ ամէն մարդ ուրախ չէ, հետեւաբար, Նոր տարուան առթիւ ուրախ ու ճոխ սեղաններուն շուրջ, չմոռնանք մեր աղօթքներուն մէջ յիշել բոլոր անոնք, որոնք մեզմէ հեռու են, եւ ուրիշներ, որոնք դժուարութեան մէջ են:

Եւ վերջապէս մեր աղօթքին մէջ յիշենք մեր հրաշալի հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը, մաղթելով խաղաղութիւն եւ պայծառ օրեր:

Նոր տարուան եւ Սուրբ Ծնունդի առթիւ բոլորիդ կ'ըսեմ՝

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ



Յովսէփ եւ Մարիամ ճամբայ ելան Բեթղեհեմ երթալու համար: Երբ հասան, գիշերը ուզեցին պանդոկի մը մէջ քնանալ, բայց պարապ սենեակ չգտան: Բեթղեհեմի մէջ Մարիամ տղայ մը ունեցաւ: Խանձարուրով փաթթեց զայն եւ դրաւ մսուրի մը մէջ, ուր կենդանիները իրենց յարդը կ'ուտէին:

Գիշեր էր: Դաշտին մէջ հովիւներ կային: Անոնք կը հսկէին իրենց ոչխարներուն: Հրեշտակ մը երեւցաւ հովիւներուն: Անոնք շատ վախցան, հրեշտակը ըսաւ. «Մի՛ վախնաք, ուրախ լուր մը պիտի տամ ձեզի: Այսօր Բեթղեհեմի մէջ Յիսուս ծնաւ»: Աւելի ուշ, հովիւները գտան Յիսուս Մանուկը Յովսէփի եւ Մարիամի հետ:

Մոգերը եւս գիտցան, որ Յիսուս ծնաւ, եւ ճամբայ ելան Յիսուսը փնտռելու:

Անոք երկինքը աստղ մը տեսան, որ կեցած էր տան մը վրայ: Շատ ուրախացան, որովհետեւ գիտցան, որ Յիսուսը գտան: Մոգերը մտորէն ներս մտան, ծունկի եկան եւ Յիսուսի տուին նուէրներ՝ ոսկի, անոյշ խունկ եւ զմուռ, որ շատ անոյշ կը բուրէր:

Ս. Ծննդեան տօնին մարդիկ բարի լուրը կ'աւետեն իրարու ըսելով.

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ», որուն պէտք է պատասխանել «Ձեզի մեզի մեծ աւետիս» ըսելով:



ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՂՋԵՐՈՒ

Եղջերուներու ընտանիքը շատ մեծ է: Կան եղջերուներ, այծեամներ, մարալներ եւ եղնիկներ:

Ասոնցմէ ամենէն հետաքրքրականը հիւսիսային եղջերուներն են, որոնք յատուկ կարողութիւն ունին դիմադրելու ցուրտին, շնորհիւ իրենց մարմնին վրայ ծածկուած խիտ բուրդին, իսկ իրենց կնճակները կ'օգնեն, որ անոնք ազատ վազեն թէ՛ ձիւնին վրայ, թէ՛ ճահիճներուն մէջ: Յուրտէն եւ զօրաւոր քամիէն պաշտպանուելու համար եղջերուները իրարու գլխի կը հաւաքուին, որովհետեւ այդպէս աւելի տաք կ'ընէ:

Բոլոր տեսակի եղջերուներու միայն արուններն են, որոնք եղջիր ունին, մինչդեռ հիւսիսային եղջերուներուն թէ՛ արուն եւ թէ՛ էգը եղջիր ունին: Անոնք շատ զգոյշ են եւ արագավազ, հետեւաբար դիւրին չէ զանոնք որսալ:

Մարդիկ եղջերուները կ'օգտագործեն նաեւ որպէս փոխադրական միջոց. անոնք կրնան ժամական 10 քիլոմետր արագութեամբ վազել եւ կրնան 100 քիլոկրամ ծանրութեամբ բեռ փոխադրել:

Հիմա կը հասկնանք, թէ ինչո՞ւ Կաղանդ պապան զատած է հիւսիսային եղջերուները՝ մեր ծանր նուէրները փոխադրելու համար:

**ՆՈՐ ՏԱՐԻ
ԴԻՄԱՒՈՐԵՆՔ
ԽՆԴԱԼՈՎ**



Գիտե՛իր, թե խնդուքը շատ օգտակար է հանգիստ եւ առողջ շնչառութիւն ունենալու:

Ահա թէ ինչպէ՛ս...

Երբ ուղեղը կ'որոշէ, թե կատակ մը խնդալիք է, ան խնդուքը կ'արձակէ:

Լուրը ուղեղէն դուրս կ'ելլէ ջիղերուն միջոցաւ եւ կը հասնի դէմքի մկաններուն, եւ անոնք կը կծկուին:

Տասներկու տարբեր մկաններ կը շարժին, անոնցմէ մէկը քիթին ծակերը կ'ընդլայնէ, միւսը շրթունքներուն ծայրը վեր կը բարձրացնէ, ուրիշ մըն ալ կոպերը դէպի վեր կը քաշէ:

Սիրտը կը սկսի արագ տրոփել, ան թոքերէն կը պահանջէ օւելի արագ շնչել՝ յաւելեալ օդ ստանալու համար, մինչ այդ ուղեղը յատուկ նիւթեր կ'արտադրէ, որոնք հանգստութիւն եւ ուրախութիւն կը պատճառեն:

Ահա թէ ինչնո՞ւ խնդուքը մեծ դեր ունի մեր առողջութեան մէջ:

Կը տեսնէ՞ք, խնդուքը պարզ շարժում մը կը թուի, բայց այդքան ալ դիրին գործողութիւն մը չէ:



Պահուած Բառ


Պահուած բառը ունի 7 տառեր եւ կը նշանակէ՝ ծնողք իրենց զաւակներուն հետ: _____

Աղօթք մաղթանք տարի ամանոր նոր տօն ծնունդ նուէր օր կաղանդ սեր



մ	ծ	ն	ռ	լ	ն	դ
ա	ս	է	ր	ի	ն	ի
ղ	մ	ն	ր	ա	ա	ք
թ	ը	ա	ղ	օ	թ	ք
ա	տ	ա	ն	ր	ն	տ
ն	կ	տ	ն	ռ	ր	օ
ք	ն	ռ	լ	է	ր	ն

ՔԻՉ ՄԸ ԿԱՏԱԿ



- 1-Ուսուցչուհին կ'ըսէ.
- Ընկերներ, այսօր մենք պիտի խոնարհենք «խօսիլ» բայը:
 - Ես կը խօսիմ, դուն կը խօսիս, ան կը խօսի, մենք կը խօսինք, դուք կը խօսիք, անոնք կը խօսին:
 - Վարդանիկ, կրկնէ.
 - Բոլորը կը խօսին...

- 2- Մայրիկը կը հարցնէ Վարդանիկին.
- Վարդանիկ, ո՞ր է վիճակացոյցդ:
 - Վրէժին տուած եմ, որպէսզի քիչ մը ծնողքը վախցնէ:



Ս. Յակոբ Ազգ. Վարժարանի Դ. կարգի աշակերտները Նոր տարուան սեմին կը գրեն իրենց փափաքները, «Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի, ինչ կ'ընէի եւ ինչո՞ւ:» հարցումներուն պատասխանելով:

Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի...

Մեծ մամայիս ետ կեանք կու տայի, որովհետեւ իմ մեծ մամաս շատ կը սիրեմ ու կը յիշեմ թէ որքան տխուր էի երբ ան մահացաւ:

Այս ընելով պապաս, ես եւ մեծ մայրս կ'ուրախանայինք:

Արմէն Մարգարեան

Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի...

Ես հայ զինուորին լաւ ճաշ եւ տաք հագուստ կու տայի, որպէսզի ցուրտէն չպաղէր եւ առողջ ըլլար:

Աշխարհի աղքատ փոքրիկներուն, որոնք տունի մէջ չեն ապրիր, տուն կու տայի իսկ որբանոցի որբերուն կ'օգնէի, որ իրենց տէրերը գտնեն:

Ռաֆայէլ Բարսաբեան

Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի...

Ես հայ զինուորին դրամական օգնութիւն կը դրկէի, որ լաւ գէնքեր գնէ եւ պաշտպանէ Հայաստանը եւ Արցախը, յետոյ ընտանիքիս հետ ժամանակ կ'անցնէի:

Կ'ուզէի նաեւ ընտանիքիս հետ Ֆլորիտա երթալ, որովհետեւ տաք քաղաք է եւ ես կը սիրեմ տաք քաղաքներ:

Կապրիէլ Խաչիկեան

Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի... Նէնէիս տունը կ'երթայի մէկ օր, քոյրիկիս կենդանի մը կ'առնէի եւ ընտանիքիս նուէրներ կու տայի, որովհետեւ կ'ուզեմ ընտանիքս ուրախացնել:

Վարդան Դանիէլեան

Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի...

Մէկ ամիս Հայաստան կ'երթայի հայ զինուորներուն տաք ճաշ եւ պզտիկ նուէրներ կու տայի: Երբ Հայաստանէն վերադառնայի Գանատայի աղքատներուն Նոր տարուան առթիւ տուն եւ տաք ճաշ կու տայի, որովհետեւ արդար չէ, որ ամէն մարդ լաւ Նոր Տարի մը ունենայ, իսկ աղքատները դուրսը, պաղ օդին նստին եւ այդպէս նշեն Նոր Տարին:

Փաթիլ Ղազարեան

Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի...

Ամէն աղքատներուն եւ մուրացկաններուն կ'օգնէի: Իրենց դրամ, ճաշ, հագուստ (օդին համեմատ) եւ տուն կու տայի: Անոնց գործ կը գտնէի, որպէսզի դրամ չահին եւ ալ չմուրան. նուէր կու տայի եւ կը փորձէի գտնել իրենց ընտանիքները եթէ հեռացած են անոնցմէ:

Արին Բարախեան

Եթէ բարի հրեշտակ ըլլայի...

Կենդանիները կը պաշտպանէի, որովհետեւ անոնք շատ անուշիկ են եւ չեմ ուզեր որ անհետանան, օրինակ՝ հիւսիսային բեւեռի ճերմակ արջերը եւ արջակատունները: Բնութիւնը կը պաշտպանէի ապականութեան վտանգէն: Ապականած օդին սառերը կը հալին, իսկ կենդանիները դժուարութիւն կ'ունենան հանգիստ ապրելու: Նաեւ աշխարհը կը մաքրէի մարդոց աղբերէն եւ կը պատժէի բոլոր մարդիկը, որոնք ծառեր կը կտրեն:

Տեսիլ Մկրտիչեան

Եթէ բարի հրեշտակ ըլլայի...

Կ'երթայի աղքատ մարդոց դրամ կու տայի եւ անոնց հարուստ ընտանիք մը կը գտնէի: Յետոյ անոնց ճաշ ու տուն կը գնէի: Հայ զինուորին պակսող բաներ կը գտնէի եւ անոնց զօրութիւն եւ ուժ կու տայի:

Վէմ Աճէմեան

Եթէ բարի հրեշտակ ըլլայի...

Հայաստան կ'երթայի եւ կ'օգնէի մարդոց, որոնք դրամ չունին, որպէսզի սննդարար ճաշ ունենան. իսկ եթէ տուն չունին, տուն կը գնէի: Հայաստանի պատերազմը կը կեցնէի, որպէսզի մարդ չմեռնի: Կ'օգնէի բոլոր փոքրիկներուն, որոնք դպրոց չեն կրնար երթալ, որպէսզի նոր բառեր սորվին եւ զարգանան:

Սաշա Ապրօ

Եթէ բարի հրեշտակ մը ըլլայի...

Արցախի բոլոր փոքրիկներուն դրամ կու տայի, որովհետեւ շատ փոքրիկներ կան, որոնք իրենց ծնողքը կորսնցուցած են. որբ են եւ կ'ապրին որբանոցներու մէջ: Կ'ուզէի անոնց դրամ նուիրել, որպէսզի գնեն իրենց ուզածը:

Արրինէ Զաքարեան



Ս. Յակոբ վարժարանի 2. կարգի աշակերտներու օրագիրէն...

**Սիրելի՛ օրագիր
3 Նոյեմբեր 2022**

Շատ բաներ կան մեր կեանքին մէջ, որոնք ամէն օր չեն պատահիր: Օրինակ՝ փիղի մը վրայ նստիլ, անջրպետին մէջ արթննալ եւ նոյնիսկ դրամ գտնել մագերուղ մէջ: Ուրիշ բան մը որ ամէն օր չի պատահիր, հեղինակի մը հետ տեսնուիլն է: Բայց ուրախ եմ ըսելու, որ ես տեսնուեցայ տիկին Ալին Շողեր Մարգարեանին հետ, մրցանակ մը շահող եւ «Պատանեկան օրագիր» գիրքը գրողին հետ: Ես՝ Կալի Զաքարեան, 11, գրեթէ 12 տարեկան, հանդիպեցայ տիկին Շողերին հետ:

Այս հանդիպումը զիս ներշնչեց, որ աւելիով հայերէն գրեմ: Անկէ զատ, տիկին Մարգարեանը բան մը ըսաւ մեր հանդիպումին ընթացքին: Ան ըսաւ. «Եթէ մեր երեւակայածը գոյութիւն չունի, ուրեմն կարելի է ստեղծել զայն»: Այս խօսքը այն խօսքերէն մէկն է, զոր երբեք պիտի չմոռնամ: Ես կը կարծեմ, որ շատ բախտաւոր եմ այս հանդիպման ներկայ գտնուելով եւ անհամբեր եմ, որ ուրիշ մարդոց ալ տեղեկացնեմ ասոր մասին:

Սիրով՝
Կալի Զաքարեան



Ս. Յակոբ վարժարանի Զ. կարգի աշակերտներու օրագիրէն...

ՄԵՐ ՆՈՐ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱՐԱՆԸ
3 Նոյեմբեր 2022

Այսօր էր պաշտօնական բացումը: Շատ անհամբեր էի ստեղծագործարան երթալու եւ շարունակելու մեր սկսած աշխատանքը: Տիկին Շողեր Ալին Մարգարեանին ծանօթանալէ ետք, ստեղծագործարան մեկնելու ժամը հասաւ: Երբ ներս մտանք, տեսայ որ Առէնը, Դաւիթը, Լէան եւ Միան արդէն հոն էին: Համեղ ճաշերու սեղան մըն ալ կար: Հիւրերը մեզմէ 15-30 վայրկեան ետք եկան: Նախ խօսեցաւ մեր տնօրէնուհին՝ տիկին Լորի Ապրաքեանը: Խօսք առին նաեւ այս ծրագիրին նուիրատուները՝ տէր եւ տիկին Սարօ եւ Թամարա Տէր Պետրոսեանները, ապա Սրբազան Հայրը: Շատ հպարտ զգացի, որ ես Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան կը յաճախեմ: Մենք շարունակեցինք աշխատիլ «stop motion»-ին վրայ: Հիւրերը խօսեցան իրարու հետ, շրջեցան սենեակէն ներս եւ մեզի հարցումներ հարցուցին մեր ըրած աշխատանքին մասին: Մենք շատ սիրով պատասխանեցինք: Յանկարծ իմ մեծ մամաս եւ մեծ պապաս տեսայ: Շատ ուրախ էի եւ հպարտ զգացի, որ անոնք ալ ներկայ էին: Արին եւ ես սկսանք աւելի արագ աշխատիլ, որովհետեւ միայն 15 վայրկեան կը մնար, եւ մեր միւս ընկերները արդէն զացած էին դասարան: Վերջապէս, վերջացուցինք մեր աշխատանքը: Տիկին Նաթալիին ցոյց տուինք. ան շատ սիրեց ու շատ գոհ էր մեզմով: Տիկին Նաթալիին այս ստեղծագործարանին պատասխանատուին է եւ մեր Հայոց Պատմութեան ուսուցչուհին: Ստեղծագործարանէն դասարան վերադարձանք: Ես շատ լաւ տպաւորուեցայ այս փորձառութենէն: Այլեւս մեր երեւակայած գաղափարները պիտի կարենանք ստեղծագործել: Ունինք նոր եւ արդիական միջոցներ եւ պայմաններ, որոնք մեզ պիտի քաջալերեն, որ մենք միշտ գործածենք այս ստեղծագործարանը, շինենք նոր բաներ, աշխատինք միասին եւ հաճելի ժամանակ անցընենք: Բացառիկ օր մը անցուցի: Ինծի համար շատ անոյշ եւ յատուկ յիշատակ մը պիտի մնայ այս մէկը:

Սիրով՝
Կարէն Մկրտիչեան

Ո՞վ կ'ուզէ ըլլալ բազմագէտ

1- Խնդուքը օգտակար է,
ա. Շուտ քննալու համար
բ. Հանգիստ եւ առողջ շնչառութիւն ունենալու համար
գ. Աղմկելու համար

2-Hotel կը նշանակէ
ա. Ննջասենեակ:
բ. Պանդոկ:
գ. Հիւրերու ընդունարան:

3- Մարմնի դժուարները կը պահանջէ, որ թոքերը աւելի արագ շնչեն:
ա. Սիրտը:
բ. Քիթը:
գ. Մկանները:

4- Յիսուս ծնաւ
ա. Բեթղեհեմի մէջ:
բ. Նազարէթ քաղաքը:
գ. Երուսաղէմի մէջ:

5- Քանի մկաններ կը շարժին, երբ մէկը խնդայ:
ա. Չորս մկաններ
բ. 45 մկաններ
գ. 12 մկաններ

6- Աւետել կը նշանակէ
ա. Բարի լուր տալ
բ. Նոր տարի տօնել
գ. Նուէր տալ

7- Ամբողջացոր. Ս. Ծնունդին մարդիկ կ'ըսեն.
«Քրիստոս.....»
ա. Յարեաւ ի մտելոց
բ. Ծնաւ եւ յայտնեցաւ
գ. Օրհնեցէք

8- Նոյեմբեր 3-ին Ս. Յակոբ Ազգ. Վարժարանէն ներս բացումը կատարուեցաւ
ա. Ճաշարանի մը:
բ. Ստեղծագործարանի մը:
գ. Տարրալուծարանի մը:

9- Հիւսիսային եղջերուներու
ա. Թէ արուն եւ թէ էգը եղջերու ունին:
բ. Արագութիւնը կը հասնի ժամական 10 մետրի:
գ. Բուրդը շատ դիւրին կարելի է ունենալ:

10- Հոմանիշներ են,
ա. Մարալ, եղնիկ, եղջերու
բ. Եղնիկ, եղջերու, յովազ
գ. Աստղիկ, եղնիկ, այծեամ



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի
Գանատայի Երջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի
իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Զեփիւռ Ասատուրեան
Ձեայղացք՝ Լորի Խաչերեանի